47. ԱՍԼԱՆ ՏԱՏԵՆ

Կէղնի, չէղնի թյուճարրմ, էդ թյուճարը հեչ ավլատ ու թավլատ չուներ, ճիժ չէղներ ուր կնկան։

Էդ մարդ կըխտիարնա, ան ուրրմ մեկ կնստի ուր կնկան կասե.—Կնի՛կ, մենք ավլատ ու թավլատ չունինք, մենք էլ ղէդա մալ ու թամալն ի՞նչ կէնինք,—իրիկն կասե կնկան.—Ես պիտի հ՚էլնիմ ղէդա մալ ցըրվիմ վըր ֆախեր-ֆուխարին։

Կէլնի ղէդ մալ զըմեն կցրվե վըր հ՚էրկրացուն։ Կմնա ինք ու մեկ դըռոտ ձիմ՚։

Վախտըմ դըռ կմնա ուր հ՚էրկրի մեջ, ավուրրմ մեկ կնիկըն իրկան կասե.—Մա՛րդ, կէրևա ես մանցեր իմ։

Իրիկն ասաց կնկան.—Կնի՛կ, շիտակ դինաս օր դու էրկուհոդովցեր իս. շո՞ւտուց իս մանցի, թե՞ չէ՝ թաժա է։

Կնիկն կասե.—Շիտակ գինամ օր էրկու հոդով իմ, էղավ էրկու իրեք անգամ ճիժս կխաղա։

Իրիկն կասե կնկան.—Կնի՛կ, մաղամ օր դու էրկուհոդովցեր իս ու ես լէ իմ մալէն ու դուլվաթից էղա, դըհա էդա հ՚էրկրի մեջ մըզիկ կանել հարամ է։

Աֆանդը՛մ, հ՚էլան բառցան զուր դռոտ ձին, ինքն ու ուր կնիկն, հ՚ընկան ճամբախ։ Հ՚ընկան ճամբախ, շատ գացին, քիչ գացին, էկան մեկ դաշտիմ՚ օրթեն։

Տեսան էդ դաշտի օրթեն ֆուխարա քոռ պառավըմ կեր, նըստուկ էր էդ տեխ։

Հ'իշուցին ղուրանց բեռ էդ քոռ պառվու խեշ ու նստան։

Էդ տեխ թուճրի կնիկ կանավ ցավ. դայեկ չկեր։ Աստծու հրամանով հ'էրկնուց հ'իշան էրկու էղունիկ, մեկն էղավ քավոր, մեկն՝ դայեկ, ղէրեխեն առան՝ էրեխեն տղա էր։

Աֆանդը՛մ, առան ղէրեխեն, պըլուլեցին ջորեր, շինին զխոնտախ, դրին գետին։

Դրեցին գետին, էղբվնըկներ թռան հ'էլան ծառու ծեր, էն մեկ էղբվնեկն մեկէլին ասեց.—Մենք զէդ էրեխեն առանք դրինք գետին ու թռանք հ'էլանք էդա ծառու ծեր, էդոր հատիեմ՝ տալու չե՞նք։

Մեկէլն ասեց.—Հատիեմ՝ պետք է, ի՞նչ իտանք։

Էն մեկ էղբվնիկն վերուց ասեց.—Իմ հատիեն էդա է.—Թուր ու սուր հ'ինք չբանի։

Էն մեկն էլ վերուց ասեց.—Իմ լէ՝ ջուր հ'ընկնի, չխեղդի։

Էն մեկ լէ վերուց էն հ'առջին էղբվնիկ.—Ուր մեջք գետին դընող չէղնի, բեհսապ խվաթ էղնի ուրին։

Վերջի էղբվնիկ ասեց.—Օր քընց զօր մեծնա։

Ասին ու թռան գացին։

Լուսուն հ'էլան բառցան զուրանց գրոտ ձին, առան ղուրանց էրեխեն, քոռ կնիկ լէ հ'էտև, հ'ընկան դաշտ ու դուրան։

Շատ գացին, քիչ գացին, էկան թագավորական հ'էրկիրըմ դախել էղան։

Էկան, մութ տվեր էր դետին, չկարցան տեխըմ գտնեն օր սըթըրվեն, գացին թագավորի սարի տակ, մեկ քեռջեն նստան։ Նստան էդ տեխ։ Էդ թագավոր հիվանդ էր, հ'ընկուկ էր ջըլեր։

Քոռ պառավ ջոկվավ էդոնցնե, գընաց դուռըմ զարկեց, մտավ ներս։

Էդ տան մեջ, իմալ կէղնի հ'իրկուն խոսք կընցնի կդառնա, թե մըր թագավոր հիվանդ է. կընկնի պառվու անկաջ։

Պառավն կասե.—Ես քոռ եմ, չըմ կըռնա էրթա, զիմ ձեռք բըռնեք, տարեք մըտ թագավոր, տեսնամ չը՞մ կռնա սաղցու։

Վերցին զպառավ, առոք-փառոք առան գացին թագավորի դիվան։

Գացին օր հասան դիվնի դուռ, թագավորին մալումաթ տվին,

թե.—Երկու աչքեն քոռ պառավըմ էկեր է, զքի պիտի սաղցու։ Հրաման էրե գա ներս։

Թագավորն ասեց.—Հրամա՛ն է,—պառավ մտավ ներս։

Պառավ օր մտավ ներս, վերուց ասեց.—Թագավո՛ր ապրած, անցյալ օր ես դաշտի մեջ բանիմ՝ պատահեցա, ջիվարա մանցի։ Դաշտի մեջ նստուկ ենք, մեկ լէ տեսնամ մարդըմ ու կնիկըմ գըռոտ ձիում՝ վրա բառցած են ղուրանց հուր ու մուր, կիգեն, էկան իմ խեչ թափեցին։ Էդ կնիկ էրկու հոգով էր, ցավ ըրռնեց, պառկելու վրա էր, հ՝էրկնքեն հ՝իջավ էրկու էղըվնիկ, զճիժն առան, խոնտրղեցին, դրին գետին ու հ՝էլան ծառու վրեն նստան։ Էղըվնիկներուց մեկն՝ դայեկ, մեկ՝ քավոր, եր թռան նստան ծառու վրեն, էն մեկ էղըվնիկն ասեց մեկէլին. «Զէգա տեղեն առանք, դրինք գետին. հատիեմ՝ պետք չէ՞ իդանք։

Մեկելն ասեց. «Իմա՞լ պետք չէ»։

Առջին էղըվնիկն ասեց. «Սուր ու թուր հ՝ինք չբանի»։

Մեկելն վերուց ասեց. «Ուր խվաթին ու ուժին հըսապ չէղնի»։

Առջին էղըվնիկ ըստհախ վերուց. «Ջըրով չխեղդվի, օր հ՝ընկնի ջուր»։

Վերջին էղըվնիկն ասեց. «Օրբղոր մեծնա»։

Սորա էրկու էղըվնիկ մեկտեղ վերցին ասին, թե էն դահ օր էրկու էղըվնիկն կթռնեն կէրթեն։ Ասին.—Որն որ ուտե ղքու միս, էն ուժն ու խվաթ դառնա վըր էնդոր, ինք լէ կէղնի տրսնուհինգ տարեկան խորթըմ։

Զէգ խոսք պառավ ուր քըմեն ասեց օր զտղեն կորցներ։

Պառավն դուրս հ՝էլավ թագավորի խեչեն չէլավ, թագավորն հրաման էրեց.—Մըր հ՝էրկրի մեջ որն օր խարիպ զալացող կա, կբռնիք բերիք էդա տեխ։

Պառավն զտղի տեխ օղորդ չըր ցուցուցե, բըլե ասեր էր. «Իմ հետ էկան, քու քաղքի մեջն ին»։

Աֆանդը՛մ, քի սան սրն, հ՝ընկան քաղքի մեջ. օլըրտան, զարկին-զարկվան, գացին տեսան օր մարդըմ, կնիկըմ ու էրեխեմ՝ նստուկ ին թագավորի սարայու պատի տակ, առան էկան թագավորին։ Օր առան էկան թագավորին, թագավոր հարցուց էդ մարդուց, ասեց.—Էդա խոնտախ քու տըղե՞ն է։

Մարդն էլ ասեց.—Իմ տղեն է։

Մորն լէ կհարցու.—Էդա քու տղե՞ն է։

Մեր լէ կասե.—Ի՛մ տղեն։

Ըստհախ կհարցու կասե.—Քանի՞ օր կէնե էդ տղեն էղեր է, հ՚ո՞ւր է էղի։

Կասին.—Էրկու-իրեք օր կէնե էղեր է, քու հողու մեջն է էղի։

Թագավորն կասե բաղբրկնին, ուր կնկան.—Զէդ տղեն օսկով չը՞ք իտա ընծիկ։

Հէրն կվերցու կասե.—Թագավո՛ր ապրած, հիշ մեկ մարդըմ ղուր ճեկութ օսկով կէլնի ծախե։

Թագավոր կվերու կասե.—Էրկու իրեք անգամ կկշռեմ, օսկին թըղ էղնի՝ քղիկ, տղեն՝ ընծիկ։

Հերն ու մեր բաշլամիշ կէնին լալ. Թագավորն կասե.—Հ՚ո՞րի կիլաք, հ՚իլաք լէ ղտղեն կառնիմ ձըր ձեռքեն, չի լաք լէ՝ կառնիմ։

Տղի հերն կասե.—Կիլամ օր դու ընծիկ օսկի կցուցուս ու կասիս ղտղեդ դնիմ կշեռք, կշիռքիմ, իրեք-չորս ուր քաշանքով օսկի իտամ առնիմ։ Թագավոր ապրած, իմ դոլվրթին խըլըսել չկեր, ընծիկ լէ զավակ չէր էղներ, տաս հատ հրմլա տղա կկշռեր իմ փառեն, ցրվեցի ֆախեր-ֆուխարին, մատաղ էրի աստծուն, ղէդա տղեն տվեց ընծիկ։ Մկա լէ էկեր ես իմ ձեռքեն կառնես։

Թագավորի հոգ լէ չէր, ինչ օր ասեց բազրկան, ասեց.—Օսկով լէ էղնի՝ կառնիմ քու ձեռքեն զէդ տղեն, զորով լէ էղնի՝ կառնիմ։

Բռնեց զորով առավ հո՞ր ու մոր ձեռքեն զտղեն, հերն ու մերն թալեց դուրս։ Մերն ու հեր արնե-արտասունք թափելով, լալով ու ողբալով հ՚էլան թագավորի սարից դուրս։

Թագավորն օր զտղի հերն ու մեր թալեց դուրս, հրաման էրեց ղչալատչեք կանչին։

Կանչին, էկան էրկու ջալատչի մըտան ներս, թագավորն էգոնց ասեց.—Կառնեք ղէդա տղեն, կէրթաք մըր քաղքի հ՚ետև սարըմ կա, կմորթեք, թամիղըմ զուր արուն կառնեք, կըլնաք ջուջեսներու մեջ, զինք լէ աղեկըմ կբերեք կիտաք ֆրոուն կարմըրցուք, կբերեք ընծիկ ուտիմ։

Ջալատչեք առան զտղեն ու հ՚էլան գացին քաղքեն դուրս։ Օր հ՚էլան, աստծու կողմանե մեկ ջալատչու սիրտ բահմ ընկավ, ասաց ուր ընկեր ջալատչուն. —Ջանը՛մ, էդա մա՛նսում էրեխեն ի՞նչ է էրի մեզիկ օր թագավոր հրաման է էրի մորթինք։

Էն մեկել ջալատչին ասեց.—Մենք ի՞նչ էնինք, մեղք թագավորին է։

Առջի ջալատչին վերուց ասեց.—Ախպե՛ր, էկո զէդ տղեն չմորթինք, ինչ օր պետք է, ես կհոգամ։

Մեկել ընկեր վերուց ասեց.—Իմա՞լ կէնիս օր թագավոր չը-հասկընա ու ուր հրաման տեխ հ՚իգա։

Ասեց.—Ես գինամ, կառնենք պզտիկ գառըմ, զարուն կառնենք· կըլնանք շուշի մեշ, ըզկյանդեն լէ կշինիմ իսանի կյանդի չեշիդ, կիտամ ֆըռուն, կարմրցուն ու կառնինք, կէրթանք թագավորին։

Հ՚էլան, էրկուք մեկտեխ գացին առան գառըմ, մորթեցին հա-նեցին, զարուն լըցին շուշեք, զկյավդեն կտրեցին շինեցին իսանի կյավդա, գրին սինու վրեն, քաշեցին փեճկերներ ինք։ Ջտղեն լէ, շինեցին հոլըկըմ, դրին մեշ, առան զգառան կյավդեն էկան, տվին· ֆըռուն, կարմրցուցին, առան գացին թագավորին։

Թագավորն է, օրական ֆընճան մը արուն կխմեր, զմիս կու-տեր, զօսկոր լէ կսղկեր, թալեր բերան։

Աստծու հրամանով օր զօր թագավոր գնաց ու սաղցավ։

Աֆանդը՛մ, մենք թողինք ղթագավորն ուր հալու մեշ, հըմկա· դառնանք տղի վրեն։

Ջալատչեք զտղեն օր կդնեն հոլըկի մեջ, կթողին կէրթան, ասլանըմ էրկու քոթոթ հ՚ետևեն, կիգա կմտնի էդ հոլըկ, մեկ ծիծ· կիտա քոթոթներուն, մեկ լէ՝ տղին։

Շատ, քիչ ժամանակըմ կպահե ասլան զէդ տղին ուր ծծի կա-թով։

Էդ թագավորին տղեմ՝ կէղնի, անուն Մահմատ։

Էդ Մահմատ հ՚ըմեն ժամանակ թաղին ու թուլին կէձգեր հ՚ե-տևեն, կէրթեր ավճուրթենի։

Ավուրըմ մեկ էդ Մահմատ կէլնի կառնի զուր թաղին ու թու-լեն, կէրթա ավ ու խուշի, կիգա էդ սարու գըլուխ, կիշքե օր հո-լըկըմ կա էդ տեխ, կասե ինքն ուրին.—Կանի՛ հեղըմ հ՚էլնիմ էդա սարու գլուխ, տեսնամ էդ ի՞նչ հոլըկ է էդ տեխ։

Կէլնի, հոլըկին կմոտենա, կտեսնա օր ասլանըմ հ՚էլավ հո-լըկեն ու կփախնի, էրկու ձագ, մեկ լէ էրեխեմ՝ հ՚ընկուկ է վըր լըփերուն, կգըփշե ու կէրթա ասլընի հ՚ետև։ Ինչ կէնե, ասլանին չկրնա հասնի, ասլանն ու էրկու քոթոթ կփախնին կէրթան, էրե-խեն հ՚ետևանց կմնա, կհասնի կբռնե։ Կիշքե օր էդոր ամեն մե· օտք ու ձեռք հաստ, ինք լէ խորոտիկ ու տեսքով։ Կառնե կիգա թա-գավորին։

Թագավոր կասե.—Էդ ի՞նչ է։

Մահմատ կպատմե, թե հ՚էսօր ավճուրթենի գացեր էի ֆըլան· սարու գլուխ, տեսա հոլըկմը կեր, գացի օր իշքենք, եր հոլըկին·

մոտեցա, տեսա օր ասլանը հ'էլավ փախավ, էրկու ձագն հ'ետև, մեկ լէ էդա տղեն՝ վեր թաթերուն։ Ասլան աղատավ գնաց, տղեն չկառցավ փախավ, հասա բռնեցի, առա էկա քըզիկ։

Թագավորն ասեց.—Շա՛տ աղեկ, պահինք, էնինք մզիկ տղա։

Ժում ու ժամանակըմ պահեցին։ Տըղեն օր քընց զօր կմեծներ, աստծու աչք էղնի ուր վրեն։

Օրըմ թագավորի տղեն հարցուց թագավորից.—Թագավո՛ր. ապրած, էդ տղին անուն չկա, ի՞նչ դնինք զէդոր անուն։

Թագավորն ասեց.—Ի՞նչ անուն պիտի իտաք, քանի օր ասլընի հ'էտև բըռներ ես, անուն պետք է դնինք Ասլան տատա՝ Առյուծի ձագ։

Ասլան տատա՝ արի, Ասլան տատա՝ գնա, պահեցին, հար էղավ վարժատան։ Թագավորին ջատ սիրելի էր։

Հ'էլան տարան դրին վարժատուն, դրեցին վարժատուն, չէ՞ ուր խվաթ շատցեր էր օր զօր կշատներ, որ մեկ ճիժ հետ խոսեր, մատ քըստրցներ հ'ինք՝ թև ու գլուխ կկոտրեր։

Հ'ըմն օր կիգեն թագավորին գանգատ կէնին.—Ջանը՛մ, քու տղին խոսքըմ հասկըցու, մըր ճժերուն սըթար չի տա՝ գլուխ ու թև չմնաց մեր երեխեսներու վրեն։

Թագավորի շարեն կտրավ, հանեց վարժատնեն, ասաց.—Հորէս բաց էլ խաբուլ չըմ էնի, դու ուրիշի հետ օլըրտիս, քու ախպեր Մահմատ հ'ուր օր գնաց, էնդոր հ'էտև կէրթաս։

Էդ Մահմատ լէ զաիֆ լարեղիք տըղեմ' էր։

Իրարու հետ ժամանակըմ կօլըրդին Մահմադն ու Ասլան տատեն։

Մակար էդ Մահմատ սավդալու է էղի, որ զուր հետ կէրթա։

Աֆանդը՛մ, Մահմատ յոթ դևի քուրոջ սուրաթն տեսեր է ջրի մեջ, էղեր է սավդալու։

Ավուրըմ մեկ էդ Մահմատն ու Ասլան տատեն հ'էլան գացին քաղքեն դուրս, հավզիմ' վրա նստան։

Թավաքալի Մահմատ էդ հավզի մեջ մեկ լէ տեսավ ըզյոթ դևի քուրոջ պատկեր, օր տեսավ՝ խելք գնաց ու հ'ընկավ գետին։

Ասլան տատեն բռնեց զէդոր պորտ, ճըմռեց, ջուր լցեց վըր գլխուն ու հ'էրեսին, այլըմիջ էղավ, հ'էլավ նստավ։

Ասլան տատեն հարցուց.—Ախպե՛ր, էդ ի՞նչ էր քու ցավն օր դու հըմլա էղար։

Ասեց.—Ախպե՛ր, զիմ ցավ մ'հարցու, իմ ցավ հրմալ ցավ մրն է, օր նը՛ դու կռնաս ճար էնիս, նը՛ իմ հեր, մենակ աստված կրնա։

Ասլան տատեն ասեց.—Ախպե՛ր, էկո, զօղորտն ասե ընծիկ. ես քու դարդին չարա կռնամ էնիմ։

էհ Մահմատն է, կվախենա, քանի օր կիշքե Ասլան տատի թև ու թիկունքն, կռնա՞ օր չասե։

— Ախպե՛ր, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, Հուրի փարիմ՝ տեսեր իմ ջրի մեջ, կասե. «ես յոթ դևի քուրն իմ, աստծու հրամանով բուդալա իմ էղի քու հետ, թե օր կռնաս՝ էկո՛, զիս յոթ դևից առ, տար քզիկ»։ Իմ ուժեն վեր է, իմ հոր խվաթ լէ չփաթե. էն վախտ օր ես զէդ ախչիկ կտեսնամ, կհալիմ ու կմաշիմ, էղավ էդա քանի տարի իմ հալ էդա է։

Հ'էլան էդ տեխեն ինք ու Մահմատ էկան։ Զէ՞ Մահմատ օր զախչիկ տեսեր էր, ըռանկ թալեր էր։ Թագավորն օր տեսավ զՄահմատի ռանկ, վախեցավ, հարցուց Մահմատից.—Տղա՛, քզիկ ի՞նչ է էղի, հարստության ու դոլվաթի կողմանե աշխարհք հ'ըմեն քում։ Թագավորության կողմանե ամենայն աշխարհի թագավոր՝ դու, դու հ'ո՞րի օր զօր հ'ետ կէրթաս, ի՞նչ պակասութեն ունիս։

Մահմատ վերուց ասեց.—Թագավո՛ր բաբա, քու ուժեն վեր է, քու թագավորութենեն վեր է, դու իմ դարդին դարման չըս կըռնա էնի։

Հեր զբերան խփուց ու մտավ ներս, կանչեց Ասլան տատեն, ասեց.—Ասլա՛ն տատա, լա՛ռ, զքու էդ ախպեր Մահմատ ցավ չը՞ս կըռնա հ'ընկնի հ'անթի տակ, հասկնաս ի՞նչ է, բալքիմ չարեմ՝ էնինք։

Ասլան տատեն ասեց.—Աղե՛կ, էրթամ փորձիմ, տեսնամ ի՞նչ է ուր գարդ։

Հ'էլավ դուրս, չարեկիմ չափ մնաց ու դարձավ էկավ։

Ասեց.—Թե օր զիմ ուզածն էնիս, զիմ կամքն կատարիս, ես Մահմատի դարդին դարման կէնիմ։

Թագավորն ասեց.—Ասլան տատա, գլխուդ-արևուդ մեռնիմ, ի՞նչ է քու հ'ուզած, հ'ուզե՝ իտամ։

Ասլան տատեն ասեց.—Քինե կուզիմ դուռզրմ, օր հազար խիդր ուր թոփուզ էղնի, հինգ հարեր խիդր՝ ուր օղը։

Թագավորի հրաման է, անմիջապես հրաման էրեց, զէրկրի դարբնները ժողվին բերին։ Ժողվեցին բերին գարբներում, ասեց.

—Հրմալ գուռզրմ կուզիմ ձենե, մինչև վաղ այս ատեն, օր հազար խիդր ուր թոփ էղնի, հինգ հարեր խիդր՝ ուր հալխեն։

Հ'էլան դարբններ գացին։ Սուքեցին գուռզրմ՝ հազար խիդր ուր թոփն էր, հինգ հարեր խիդր ուր հալխեն էր։

Եր շինեցին խըլըսան, քաղքի մեջ թալալ տվեց, կանչեց, թե՝ ինչքան մարդ կա թըղ էրթա դոճկե առնե հ'իգա։ Քաղաք քաղքով թափան, գացին դոճկեցին, առան էկան, բերին թագավորի սարի հ'առջև։

Թագավոր փանճարից տեսավ, ասեց.—Քաք է խառնի Ասլան տատեն, օր զէդ գուռզ վերցուց գետնեն։ Ես ֆլան տղի միս կերեր իմ, զարուն խմեր իմ, չըմ կոնա վերու գետնեն, Ասլան տատե՞ն կվերու,—ասեց ու հ'իջավ ցած։ Ջրկոկավ էս դեն, էն դեն, չկրցավ հալխեն խըլվըցըներ։

Կանչեց զԱսլան տատեն, ասեց.—Լաո՛, ինչ օր ուզեր էր, հաղըր է, զքու հրաման տեխ բերեցի, զքզիկ տեսնամ։

Ասլան տատեն հ'էլավ գնաց Մահմատի հ'օդեն, ասեց.—Մահմա՛տ, Մահմատ հ'էլի, հ'էլի, օր զքզիկ հասում սրտիդ մուրազին։

Մահմատ հ'էլավ, հագավ զհալավ, առան ուրանց հաց ու մաց, էկան թագավորից բարեմնաց էղան, հ'իջան սարի հ'առջև, գուռզ թալուկ էր էնտեխ։ Կանչեց Ասլան տատեն զուր աստված, ասեց. «Յա՛, հացն ու գինին, տեր կենդանին», վերցուց զգուռզ դրեց փեճին ու հ'ընկան ինքն ու Մահմատ ճամբախ։ Թագավոր լէ ուր քոռ աչքերով կաներ էր կիչքեր, ժողովուրդ լէ վախենալուն՝ ամեկ փակեց զուր դուռ, մտավ ներս։

Շատ գացին, քիչ գացին, տեսան օր էրկու մարդ կանուկ ին վըր ճամբուն ու ջուխտըմ ճըզմի վրեն, օր գտած ին ճամբու վրեն, կուտեն զիրար. էն կասե՝ ընծիկ, էն կասե՝ ընծիկ։

Տեսան զԱսլան տատեն էդ գրոզով ու էդ խալավաթով՝ վախեցան։

Ասեց Ասլան տատեն էդոնց.—Տղեկնե՛ր, ի՞նչ բանի վրեն կկռվիք։

Էն մեկն ասեց.—Ես հ'առեջ ենք, էկա ջուխտըմ ճըզմա գտա, էդա հ'իսնե սորա էկավ, կասե՝ պետք է իտաս ընծիկ։

Ասլան տատեն ասեց.—Հեղըմ տվեք զէդ ճըզմեն տեսնամ, էդոր մարիֆաթն ի՞նչ է, օր դուք վըրեն կկռվիք։

Առավ տեսավ օր ճըզմի վրեն գրուկ է. «Որն օր զէդի հագնի, ծովու վրեն քելէ, չսկի՛ ջրի մեջ»։

Ասլան տատեն ասեց.—Օր էն տեսակ է, ես ձըր հետ բանըմ կէնիմ։

Էն մեկ մարդ ասեց.—Ախպե՛ր, զմըզիկ հարմարցու, իմալ օր էնիս՝ կընդունինք։

Ասլան տատեն ասեց.—Մենք էղանք չորս մարդ, տվեք թալիմ, որ մեկ շուտ հասավ վերցուց, թըղ էղնի էնդոր։ Առավ թալեց, էրկու սըհաթվան ճամբախ գնաց։ Վազման գնաց վերուց, էղավ ուրեն, ո՞ր կառներ ուր հետ վազնել։ Էկավ մեկ լէ առավ զուր ախպեր Մահմատ, հ՚ընկան ճամբախ։

Շատ գացին, քիչ գացին, հանդիպեցին էրկու մարդու։ Էդ էրկու մարդ խալիմ՚ ու խամչիմ՚ դրուկ է գետին, կկովին վըր էդոր, էն կասե՝ ընծիկ, էն կասե՝ ընծիկ։

Ասլան տատեն հարցուց.—Տղեկնե՛ր, հ՚ո՞րի կկովըտիք։

Էն մեկ հ՚ընկեր ասեց.—Հ՚առաջ ես իմ էկի ղէդա խալին ու խամչին գտեր իմ, հըմկա էդա էկեր է կասե՝ տուր ընծիկ։

Ասլան տատեն ասեց.—Էդ խալու ու խամչու մարիֆաթն ի՞նչ է։

Կիշխնեն, օր զօղորտ չասեն. զգուրզ օր կիշքեն վըր փեճին, մըռթըներ ուրանց կլըփլըփեր։

Ասեց էն մեկն օր հ՚առջին հեղն էր էկի.—Որն օր նստի վըր խալուն, զարկե զխամչին, հ՚ուր օր հ՚ուզե, հ՚ոնի կէրթա։

Ասլան տատեն ասեց.—Օր հըմալ է, տվեք ընծիկ, նստիմ մեջ, փորձիմ, տեսնանք օղո՞րտ է, սո՞ւտ է։

Մարդիկ կիշքին զԱսլան տատի գուռզըն ու սանտանաթ, կվախենան մոտեն, ինչ օր ասե՝ էն կէղնի։

Ասին.—Դու դինաս։

Հ՚էլավ նստավ խալու մեջ, դրեց զգուղ խալու վրեն, զճղմեքն ու զՄահմատն ու զխամչին զարկեց, ասեց. «Ըզքզիկ կուզեմ յոթ դևի ախպոր դուռ»։

Խալին վերցվավ, դրվավ յոթ դևի ախպոր սարայու կուշտ։

Աֆանդը՛մ, էդտեխ դևեսներու սարայու խեչ մեծ ծառըմ կեր։

Ասեց.—Մահմատ, էկո քիչըմ նստենք էդա ծառու տակ տինջանանք։

Բերեց զգուղ կախեց ծառեն, ծառ կճռճեր։ Դևի մեկ ախպեր հ՚էլավ դուրս, կօլըրդեր։ Տեսավ օր մեկ պառկուկ է ուրանց ծառու տակ, գուռզըմ կա կախուկ ծառեն, ծառ քոքեն հետ դըրեր էր պը-

թրատուն, մեկ մը լէ կա պառկուկ գրոզի տակ, հրուչմ՝ է, մեկ լէ հեռուն փախեր է գացի պառկի։

Դարձավ գնաց վեց ախպոր խեչ, ուրանց տուն, ասեց.—Ախպե՛ր, հ՝էսօր թուհաֆ բանիմ՝ ռաստ իմ էկի, վախեցեր իմ։

Ախպերտանք ասին.—Ի՞նչ է, խեր էղնի։

Ասեց.—Մըր սարայու խեչ մարդըմ էկի, մըր ծառեն գուռզըմ կախեր է, ծառ քոքեն կպրթրատա, իմա՞լ էնինք օր էդ մարդ չի գա ըզմզիկ սպանե։

Ասին.—Օր հըմալ է հ՝էլնինք էրթանք տավաթըմ իդանք, բերինք մըր տուն օր մըզիկ բան չասե։

Հ՝էլան էկան թաքլիֆ էրին, ասին.—Քելէ էրթանք մըր տուն։ Ախպե՛ր, հ՝որի՞ն իս էկի պառկի էդա ծառու տակ, քելեք էրթանք մըր տուն։ էդ լէ ջենլիկ է, խավեմ՝ խըմենք, աստված ձըր գործին հաջողութեն իտա։

Յո՛թ ախպեր հրտիրաց գացին։ Առան էկան ուրանց տուն։ Նարտիվանե օր պիտի հ՝էլնին վերին դին, որ մեկ թարանճի մատի վրեն զօտք դրեց, կոտրավ, հ՝իջավ ցած։

Ճարահատյալ բերին զընճըլով-մընճըլով կապեցին, քաշեցին, հանեցին վերին դին։

Մնաց քանիմ՝ օր էդոնց տուն, ասեց.—Ախպերտա՛նք, ձըր ուտելիք ի՞նչ է։

Ասին.—Մըր ուտելիք, մենք կէրթանք ծովու պըռկըներ, հրեղեն տավար կէղնի ծովու մեջեն, մեկ-մեկ, էրկու-էրկու կզարկինք, բերինք մըզիկ կուտինք։

Աֆանդը՛մ, շաբաթ օր էր, լուս կիրակի հ՝էլավ։

Մահմատին ասեց.—Դու մանցի դևա ախպերտոց խեչ, ես՞ կէրթամ։

Հ՝էլավ, առավ զխալին, զճզմեքն, զխամչին ու զգուտղն, գնաց։

Էնի թըզ էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք վըր Մահմատին։

Դևեքն ասին Մահմատին.—Դու մուխյաթ մանցի տան, մենք կէլնինք, քիչըմ օլըրդինք։

Դևեքն է, օր հ՝էլան գացին, Մահմատ մնաց մինակ, մեկ լէ տեսավ հ՝օդիմ՝ դուռ բացվավ ու հուրի-փարիմ՝ հ՝էլավ դուրս։

Մահմատն օր տեսավ զէդ Հուրի-փարին, ասեց.—Հո էդա իմ տեսած ախչիկ։

Էդ տեխ փաթվան հ'իրար ու գրկեցին զիրար, պառկան։ Վերջ եր օր հ'էլան նստան, Մահմատն Հուրի-փարուն ասեց.—Ախրր էդա տաս տարի զիս էդա հալին հասուցիր դու, իսկի չէ, զլոքգ դիր, զգլուխս դնիմ վրեն, քիչըմ հանգստանամ։

Պառկավ, քիչըմ քընավ ու հ'էլավ, տեսավ օր ախչկա կուշտ գոնդրմ բալնեկ կա կախուկ։ Ասեց ախչկան.—Էդ ի՞նչ բալնեկ է։

Ախչիկն ասեց.—Մըր հ'օդեսներու բալնեկներն ին։

Մահմատ ասեց.—Հըմալ է, տուր քիչըմ հ'էլնիմ սեր էնիմ զձըր հ'օդեք։

Ախչիկ զրալնեկներ զըմեն հանեց տվեց, մեկ բալնեկ վերցուց բալնեկներու միջեն։

Գնաց բացեց զհ'օդեք, տեսավ օր օսկի է, արծաթ է, աղրութ է, զըմբութ է լցուկ մեջ, զըմեն օլըրդավ, բերեց տվեց աղչիկ զրալնեկներ։

Ասաց.—Զէն բալնեկ օր փրցուցիր, զէն լէ պետք է իտաս, էրթամ զէն հ'օդեն լէ իշքիմ։

Ախչիկն ասեց.—Զը՛մ իտա, սորա վնաս կքաշիս,—ինչ էրեց, չկառցավ տղի վրեն, էրկու օտք դրեց մեկ սոլի մեջ։

Ասեց.—Իլլահի՛, պիտի իտաս։

Ախչիկն թաքրար ասեց.—Մահմա՛տ, էդ սանտից վաղն արի, էդ հ'ոդի ցավ շատ է, սորա կփոշմանես։

Մահմատ ասաց ախչկան.—Ի՞նչ է էդ հ'օդի ցավ, ընծիկ ասե տեսնամ։

Ասաց.—Յոթ գլխեն խափշիկ էդա տաս տարի իմ վրեն ծռուկ է, իմ ախպըրտիկ հ'ընկան հ'էտևեն, անճախ բըռնին բերին էս տեխ, բերեր ին մտուցի էդ հ'օդեն, կոխեր ին կպրե կարսի մեջ, չուրի վիզ կպրի մեջն է, գլուխ մենակ է դուրս մանցի, օր զդուռ բանաս, կէլնի կառնե զիս ու կէրթա, քու ուժ չհաղթե։

Մահմատ դինլամիջ չէրեց, մեկ լէ ասաց.—Իլլահի՛, պիտի իտաս զէդ հ'օդի բալնեկ։

Ախչիկ ջան-դարդի էղավ, զբալնեկ տվեց։ Մահմատ առավ զբալնեկ, գնաց, բացեց ըզհ'օդի դուռն ու մտավ ներս։ Տեսավ օր յոթ գլխեն խափշիկ օղորտ հանդ էր, կպրե կարսի մեջ։

Խափշիկն Մահմատին ասեց.—Կտրի՛ճ, գլխուդ արևուդ խուրբան, փշում ջուր էն ջրեն տուր, խմիմ։

Ախչիկ լէ հետն էր, ասեց.—Մահմա՛տ, մի՛ տուր։

Մահմատ անկաճ չէրեց, վերցուց սաֆով ջուր հ'էրկնցուց խափշկան։

Խափշիկ զջուրն օր խմեց, սըրսըփաց, կպրի միջեն հ'էլավ դուրս։ Աֆանդը՛մ, սիլեմ՝ չէր, թոփմ՝ էր զարկեց Մահմատին. Մահմատի ուշք հ'ընցավ, հ'ընկավ գետին, առավ զՀուրի-փարին ու թըռավ։

Խափշիկ թըղ էրթա ուր ճամրու հետ, Մահմատի ուշք լէ թըղ հ'ընցնի, հ'ընկնի գետին։ Մենք դառնանք յոթն ախպեր դևեսներու վրեն։

Հ'իրկուն օր էղավ, դևեք դարցան էկան, տեսան օր հ'օդեսներու դռներ հ'ըմեն բաց, Մահմատի ուշք հ'ընցեր ընկեր է գետին, Հուրի-փարի չկա, Խափշիկ լէ չկա։

Հըմկա էդոնք ախչկա ու խափշկա դեմ չըն հ'ընկնի, Մահմատի հոգն է կուտեն, թե՝ Ասլան տատեն կիգա, մենք ի՞նչ ճուհար իտանք։

Շատ, քիչ մանցին, զՄահմատի պորտ ճըմռեցին, ջուր լցին գլխուն, խելք էկավ վրեն։

Եբ խելքն էկավ վրրեն, հարցուցին Մահմատից.—էդ ի՞նչ էղի քզիկ, հ'որին էր հ'ընցի քու ուշք։

Մահմատն ասեց.—Իմ գլուխն ինչ էկավ, ձըր քուր հ'էլավ հ'օդից, բալնեկներ տեսա մոտ, յալվարմիշ էղա, ասի. «Տուր զէդ բալնեկներ, զէդա հ'օդեք իշքիմ»։ Զբալնեկներ տվեց, մեկ բալնեկ մեջեն հանեց, գացի, բացի զհ'օդեք տեսա օսկի, արծաթ, ազրութ, զմրութ են լցուկ մեջ ուրանց։ Բերի զբալնեկներ տվի ձըր քուրոջ։ Ըստհաղ յալվարմիշ էղա, օր զէն հ'օգի բալնեկ լէ իտա։ Ասաց՝ չըմ իտա։ Ես յալվար-յախա էղա, զոռով առա, բացի զհ'օդի դուռ, տեսա յոթ գլխեն խափշիկ մտուկ էր կպրե կարսի մեջ մինչև գլուխ, ջուրըմ ուզեց։ Ձըր քուր ասաց՝ մի տա։ Ես անկաճ չէրի՝ տվի։ Օր խըմեց, մեկ լէ տեսանք յոթ գլխեն խափշիկ ծործաց, կարսի միջեն հ'էլավ, ճըլոթըմ զարկեց ընծիկ, ես հ'ընկա գետին, ինչ դիով գնաց, էլ չըմ գինա։

Էդոնք թրղ մնան ուրանց հալու մեջ, մենք դառնանք Ասլան տատի վրեն։

Դևեն ասեց մեկ ախպոր.—Ախպե՛ր, հ'էլի քեռջկի տանիք, տես գալացող-էրթացող չկա՞,—էդ մարդ գնաց էլ չէկավ։

Հ'էլավ տանիք, մեկ ախպերն տեսավ օր դաշտ ու դուրան բռներ է թող ու դուման, կիգա։

Հ՝իշան, ախպերտոցն ասեց.—Ախպերտա՜նք, դաշտ ու դուրան բոներ է թող ու դուման, կիգա։

Աֆանդը՜մ, Ասլան տատեն էր, ճըզմեքներ չըկեր ջրի մեշ, քըշեր էր ծովու մեշ ու էնդիեն մ՝էնդիեն տվեր էր հ՝առեջ քշի ինչքան հրեղեն տավար օր կար ու կիգեր։

Էկավ մտավ Ասլան տատեն ներս, բարև տվեց հազըրներուն։

Ասեց.—Ախպերտա՜նք, դուք զեն մ՝ասեք ձըր հալ ու հալպաթ, իմ ախպեր Մահմատի հալն իմա՞լ է։

Ասին.—Ախպե՜ր, սուտն աստծու դուշման է, վալահի մըր վիճակ լէ գեշ է, Մահմատին լէ։

— Իմա՞լ գեշ է, ախպերտանք, ձըր հալ ու հալպաթ,—ասեց Ասլան տատեն ախպերտոց։

Ասին.—Ախպե՜ր, մզիկ քուրըմ կեր, յոթ գլխեն խափշիկ էդա տաս տարի ծրոուկ էր վրեն. անջախ յոթն ախպերս զարկեցինք, զարկվանք, բռնեցինք զէդ խափշիկն, առանք, էկանք մըր տուն, մտուցինք կպրե կարսի մեջ։

Էն վախտ օր դու հ՝էլար գացիր, մենք լէ հ՝էլանք գացինք ավջութենի, Մահմատ մենակ կմնա տուն։ Մըր քուր կէլնի տան մեշ օր օլըրդի, քու ախպեր Մահմատ օր կտեսնա, յալվարմիշ կէղնի, մեր հ՝օդեսներու բալնեկները կառնե մոտեն։ Մըր քուր զբալնեկներ զըմեն կիտա։ Մեկ բալնեկ մինակ կհանե միջեն, կմտնե զհ՝օդեք, զըմեն սեր կէնե, ըստհախ կիգա զէն հ՝օդի բալնեկ կուզե ֆտանե, մըր քուր չի տա, զօրագի կառնե, կտանե բանա։ Կտեսնա օր յոթ գլխեն խափշիկ հընտե մտուկ կպրե կարսի մեջ։ Խափշիկ կուզե ջուրըմ Մահմատից։ Մըր քուր կասե՝ մի տա։ Անկաճ չէնե, կիտա։ Խափշիկ կսըրսըփա, կէլնի կարսեն, սիլեմ՝ կզարկե Մահմատին, կառնե զմեր քուրն ու կէրթա։ Մենք էկանք ավջութենեն, տեսանք հ՝օդեսներու դռները բաց։ Մահմատ ուշք հ՝ընցի, հ՝ընկուկ է գետին, նը՜ քուր կա, նը՜ խափշիկ։ Սորա բերինք պաղ ջուր լցինք Մահմատ գլխուն, այլըմիշ էղավ, հ՝էլավ հարցուցինք. իմալ օր մենք քզիկ նախլ էրինք, ինք լէ հմալ նախլ էրեց մըզիկ։

Ասլան տատեն հարցուց էդ յոթ դևից, ասաց.—Կյալո, դուք զյոթ գլխեն խափշկի տեխ դինա՞ք դոր է։

Ախպերտանք ասին.—Հա՜, գինանք դոր է, յոթ ծովու օրթեն կմնա։

Աֆանդը՜մ, ասաց.—Իմ ախպեր Մահմատ ձզիկ թասլիմ, մուխլաթ կմնաք, հար ես հ՝իգամ։ Բարեմնաց էղավ յոթն ախպեր

դևերներուց ու Մահմատից, հ'էլավ նստավ խալու վրեն, առավ զուր խամչին ձեռք, զգուռզն ու ճըզմեն լէ հետ, աստված կանչեց, զարկեց վըր խալուն ու ասաց. «Խալի, կուզիմ որ զիս դնիս յոթ ծովու օրթեն, յոթ գլխեն խափշկի տան հ'առշա»։ Հեզըմ լէ զաչք խփուց, բացեց, գտավ զինք յոթ ծովու օրթեն։ Հագավ գճզմեք, հ'իշավ յոթ ծովու օրթալախ՝ խափշկի քյոշկ, տեսավ որ Հուրի-փարին մենակ նստուկ է։

Ասեց.—Ախչի՛, խափշիկն հ'ո՞ւր է։

Ախչիկն ասեց.—Գլխուդ արևուդ խուրբան, խափշիկ յոթն որ կքնի, յոթն որ լէ հ'արթուն կմնա։

Ասլան տատեն ասեց ախչկան.—Ախչի՛, որ խափշիկն զարթավ, հարցու ուր մոտեն, տես ուր հոգին հ'ո՞ւր է։

Ասլան տատեն թողեց գնաց։ Խափշիկն հ'էլավ նստավ։ Որ հ'էլավ նստավ, ասեց.—Կնի՛կ, մարդահոտ կիգա։

Ախչիկն ասեց.—Տնավե՛ր, էդա յոթ ծովու օրթեն ո՞ր կիգա ու կէրթա որ ասես մարդահոտ կիգա։

Հուրի-փարեն էրեց զմատեն նստավ, կիլեր արնե-արտասունք կթափեր։

Յոթ գլխեն խափշիկն ասեց.—Ախչի՛, զքու մատեն հ'որնի՞ս էրի։

Ասեց.—Մա՛րդ իմա՞լ չէնիմ, զիմ մատեն։ Տնավե՛ր, էդա յոթ ծովու հ'օրթալախ նը՛ գըրկիցըմ կա, նը մեկ տնեցիմ՝ կա որ հետ խոսիմ, դու էլ յոթն որով կքնիս, ես իմա՞լ էնիմ։

Ասեց.—Իմ հոգին իմ ձեռք չէ, ավլի մեշն է։

Բերեց զավել, թալեց կրակ՝ բանըմ չէլավ դուրս։

Ասլան տատեն մեկ լէ հ'իջավ ցած, ասեց.—Ախչի՛, հարցուցի՞ր։

— Հարցուցի, ասեց՝ իմ հոգին ավլի մեջն է, թալի թունդիր, քան չէլավ։

Ասլան տատեն գնաց, խափշիկն հ'էլավ ասեց.—Կնի՛կ, մա՛րդ, մարդահո՛տ կիգա։

Ախչիկն ասեց.—Տնաշե՛ն, էդա յոթ ծովու օրթեն ո՞ր կիգա որ կասիս՝ մարդ, մարդահոտ։

Հուրի-փարին զմատեն էրեց, մեկ լէ նստավ լաց։ Խափշիկն հարցուց, ասեց.—Ախչի՛, հ'որի՞ կիլաս։

Ախչիկն ասեց.—Իմա՞լ չիլամ, էդա յոթն ծովու օրթեն նը՛

մարդըմ կա, նը՛ դրկից, դու լէ յոթն օր կքնես, զքու հոգին չըսասի ո՞րն է, օր խազամ հետ, հար հ՚էլնիս։

Ասեց.—Ձիու նալն է։

Հուրի-փարեն բերեց քանիմ՝ կտոր նալ շարեց հրտ հ՚իրար, նստավ ու կխաղցու խափշկա հ՚առեջ։

Յոթն օր թըմավ, խափշիկ քընավ, Ասլան տատեն մեկ լէ հ՚իջավ, էկավ ցած, ասեց.—Ախչի՛, հարցուցի՞ր։

Ախչիկն ասեց.—Հարցուցի, ասեց՝ ձիու նալն է։ Բերի հալեցի քոմուրի մեջ, բանըմ չէլավ դուրս։

— Ախչի,—ասեց Ասլան տատեն,—ես էկեր իմ քզիկ հ՚ապով, էղա նալ է, ավել է, ֆայդա չէնե, հըմալ դարաճեմ՝ բի, հասկցի, օր առնիմ զքզիկ էրթամ։

Ասլան տատեն հ՚էլավ ծովուց դուրս, խափշիկ զարթավ քնուց, ասեց.—Ախչի մա՛րդ, մարդահո՛տ։

Կնիկն կասե.—Տնաչեն, էդա յոթ ծովու մեջ ո՞ր կիգա, օր կասիս մարդահոտ։

Թաքրար Հուրի-փարին էրեց զմագեն, նստավ լաց։ Ասաց յոթ գլխեն խափշկան.—Ձիս կթալիմ ծով խեղդվիմ, յա՛ կասես զքու հոգին՝ այլանճա էղնիմ հետ, յա չէ՝ կխեղդիմ զիս, ազատիմ քու ձեռքեն։ Ես չըմ կռնա նստի մենակ իշքի յոթն օր, հար դու զարթիս։

Ջանդարդի էղավ, ըստհախ ասեց.—Հուրի-փարի, իմ հոգին իմ ձեռք չէ։ Յոթ ծովու օրթեն հրեղեն էրինջ մը կա, էնդոր ճակտի մեջ խութիմ՝ կա, խութու մեջ իրեք հատ ճնճուղ կա, մենակ էրինջ կիրակնոց-կիրակի սապախդան դուրս կիգա ծովուց, կոլըրտի, մեկ լէ կփախնի կմտնի ծովու մեջ, իմ հոգին էն է, ես չըմ կռնա բերի։

Խափշիկն օր քնավ, Ասլան տատեն հ՚իջավ ծովու մեջ։ Հարցուց.—Հուրի-փարի, իմա՞լ էղավ, կոցա՞ր հասկնալ։

Հուրի փարին ասեց.—Էդա մարդ հըմլա կասե. «Իմ հոգին իմ ձեռք չէ, յոթ ծովու օրթեն բալաք էրինջ մը կա, էնդոր ճակտի մեջ խութիմ՝ կա, խութու մեջ իրեք ճնճուղ, իմ հոգին էն է։ Բալաք եզն է, կիրակնոց կիրակին կէլնի դուրս կոլըրտի, մեկ լէ կէրթա, կմտնի ուր տեխ»։

Ասլան տատեն հ՚էլավ դուրս, վերցուց զգուռղըն ու գնաց ծովու պռուկ։ Պաքլամիշ էրեց, տեսավ օր կիրակի սապախդան էրինջն հ՚էլավ դուրս ու կդռճրկե ավզրներու մեջ։

Կանչեց՝ հացն ու գինին, յա՛, տեր կենդանին ու զգուռզ թա-
զեց, էրինջ շրջեց գետին, հանեց ճակտի միջեն զխուքին, տեսավ օր
իրեք ճնճուղ մեջն է. ճիտեց ճնճղում՝ փոր, տեսավ օր խափշիկ
կանավ ջրի հ՝էրես։ Պոռաց.—Կտրիճ, մեռնիմ գլխուդ ու արևուդ,
քիչըմ մոֆլաթ տուր, հար հասնիմ քու խեչ։

Հար էնի հըմալ ասեց, զէնդոր գլուխ թռուց, առավ ձեռք զմե-
կել ճնճուղ, հար ճխտեց, չուրի չոքեր, խափշիկ իջավ ջրի մեջ ու
դեմ Ասլան տատեն կիգեր։ Զմեկել օր ճխտեց դրոնփ՝ չուրի գլուխ,
արկավ ու էլ չհ՝էլավ։

Դարձավ էկավ, առավ զՀուրի-փարին, հ՝էլավ նստավ խալու
մեջ, ղխամչին զարկեց վըր խալուն ու ասաց. «Զքզիկ յոթ դևի
դուռ կուզիմ»։ Տարավ յոթ դևի դուռ դրեց։ Հ՝էլավ գնաց տուն,
դևեքն օր տեսան, էկան ու զուրանց քուր բերեց, չոքեր ուրանց
դողաց։ Հ՝էլավ վի, բարև տվեց ու նստավ։ Բարովեցին զինք լէ։
Օր ոհաթավ, ասեց.

— Ախպե՛ր, էդա տաս տարի ձըր քուր իմ ախպոր հախլուն է,
ղաթի ես էդոր համար իմ էկի, զէդա զահմաթ լէ օր քաշեցի, թամ
հախլու էղավ, պետք է իդաք առնեմ էրթամ։

Դևեքն ասին.—Ախչիկմ՝ է՝ խուրբան էրինք քզիկ, որ զքու
ձեռք կբռնե, կտաննես՝ տարու.

Հ՝էլավ առավ զՄահմատն, զՀուրի-փարին, բարի մնաց էղավ
յոթ ախպոր մոտեն, նստավ վըր խալուն ու ասաց. «Կուզիմ զքզիկ
օր զմի հանես մըր թագավորի գուռ»։

Նստան վըր խալուն, աչքեր ուրանց խփուցին, Ասլան տատեն
ղխամչին զարկեց, տեսան զուրանք ուրանց թագավորի դուռ։

Խալին գնաց հ՝իջավ թագավորի սարայու հ՝առջև։ Գացին էր-
կուս համբուրեցին զթագավորի ձեռք, թագավոր ուրախցավ, օր
էկան։ Յոթն օր դոլ ու զուռնա զարկին, հարսնեք էրին։

Աֆանդը՛մ, ավուրըմ մեկ Հուրի-փարին հ՝էլեր էր ըռավախ կօ-
լըրտեր, ինչ գիներ օր թագավոր զինք կիջքեր։ Թագավոր դռան կա-
ներ էր, թամաջի էրեր էր, տեսեր էր։ Հուրի-փարին ուր հ՝օդեն օր
կմտներ, թագավոր կկանչե զԱսլան տատեն, կասե.—Ասլան տա-
տա, իմ ամբողջ հարստութեն քումն է, իմ զավակն օր կա՝ դու ես,
կէղնի իսա էկո զիմ տղա Մահմատ տար տեխրմ սպանե, ես առ-
նեմ զէդոր կնիկ։

Ասլան տատեն կասե.—Շա՛տ աղեկ, քիչըմ մոֆլաթ տուր ըն-
ծիկ։

Գնաց Մահմատին ասաց.—Քու հեր էդա հըմլա կասե ընծիկ, տեսեր է զքու կնիկ, կասե ընծիկ. «Սպանե զիմ տղեն, զկնիկն առնեմ ընծիկ»։

Ասլան տատեն կասե.—Էկո ուխտ էրե ընծիկ, օր ձեռք քաշիս թագավորութենից, չունքի թագավորըմ մեռնելուց վերջ, ադաթն է՝ տղեն նստի թախթ, ես զքու հեր կսպանիմ։

Մահմատ կասե.—Ուխտ էղնի, դու էղնիս մեծ, ես՝ պզտիկ։

Ու հ'էլան գացին, Հուրի-փարուն դռան հ'առջև յոթ գազկան հոր փորին, բերին խալի-մալի փռեցին վրեն ու Ասլան տատեն գնաց ասեց թագավորին, թե Հուրի-փարին կասե՝ քիչըմ թըղ հ'իգա իմ հ'օգեն ժըղլինք։

Թագավորն է, հ'էլավ դեմ ու դուզ քշեց Հուրի-փարու հ'օդեն։ Դրա չըր հասի հ'օդի գուռ, խալեսներու հետ չըրոնփ, գնաց յոթ գազկան հորու տակ, էլ չէլավ։

Ժողովուրդի մեջ ձեն հ'ընկավ, թե թագավորն առեր է զուր գլուխն ու կորե, քոման էկան օր Մահմատ դնեն վըր թախթին։

Մահմատն ասեց.—Ինչքան օր տարով մեծ եմ ես, Ասլան տատեն պզտիկ, ես չըմ կռնա էլ լծի տակ մտնի։

Ասլան տատեն վերցին դրին թագավոր։

Ասլան տատեն ուրիշներուց հասկցեր էր ուր գլխու դալած, թագավոր վախճանելուց վերջ ջալատչեք պատմեր ին, հրաման էրեց օր ջալատչեք կանչին բերին։

Կանչին բերին, հարցուց էնդոնցնե զուր գլխու դալած, էնդոնք լէ մեկիկ-մեկիկ պատմեցին։ Բռնեց զէրկուկ լէ էրեց մեկ-մեկ մուշուր։ Ջալատչեք ասած են, թե քզիկ հեր ու մեր լէ կա։ Մարդ ձգեց արարոց աշխարհ, գտավ զհերն ու մեր, առավ էկավ։

Եբ օր հերն ու մերն էկան, չըմ դինա ինչ թագավորի ախչիկ գացին գտան բերին, պսակեցին ուր վրեն ու սկսան քեֆ ու ուրախութեն էնիլ։

Հ'էրկնուց հ'իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաշ էնողին։